ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 9 հունիսի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության ապահովման մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի

Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը։

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2011 թվականի մայիսի 19-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է։

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցիչ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության ապահովման մասին արձանագրությունն ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 10-ին՝ Մոսկվայում։

2. Արձանագրության նպատակն է իրականացնել միասնական մոտեցումներ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության ուժերի և միջոցների կազմում Կողմերի ազգային զինված ուժերից և այլ զորքերից առանձնացված միավորումների, զորամիավորումների, զորամասերի և ստորաբաժանումների կիրառումը կազմակերպելիս, ապահովել հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների արդյունավետ կառավարումը և պայմաններ ստեղծել հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների տեխնիկական, թիկունքային և տեղեկատվական ապահովման պահանջների օպերատիվ կատարման համար։

3. «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական և տեղեկատվական համատեղելիության ապահովման մասին արձանագրության համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- Արձանագրության ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության միացյալ շտաբին ներկայացնել առաջարկություններ սպառազինության և ռազմական տեխնիկայի նմուշների, դրանց տեխնիկական և տեղեկատվական համատեղելիությունն ապահովող չափանիշների և քանակական բնութագրերի ցանկի վերաբերյալ.

- Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության անդամ պետությունների պաշտպանության նախարարությունների համաձայնեցրած ժամկետներում հավաքական անվտանգության բազմակողմ ուժերի և միջոցների կազմում առանձնացված իր զինված ուժերի միավորումները, զորամիավորումները, զորամասերը և ստորաբաժանումները հանդերձավորել սպառազինության և ռազմական տեխնիկայի նմուշների, դրանց տեխնիկական և տեղեկատվական համատեղելիությունն ապահովող չափանիշների և քանակական բնութագրերի անվանացանկի պահանջները բավարարող սպառազինության և ռազմական տեխնիկայի նմուշներով։

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները բխում են ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածում ամրագրված՝ ՀՀ արտաքին քաղաքականության սկզբունքներից և պետության առջև դրված սահմանադրաիրավական այլ խնդիրներից։

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2010 թվականի դեկտեմբերի 10-ին Մոսկվայում ստորագրված՝ «Հավաքական անվտանգության մասին» պայմանագրի կազմակերպության՝ հավաքական անվտանգության համակարգի ուժերի և միջոցների սպառազինության և ռազմական տեխնիկայի տեխնիկական և տեղեկատվական

համատեղելիության ապահովման մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

9 հունիսի 2011 թվականի
ՍԴՈ-973